**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

<<10>> հուլիսի 2014թ. N 178-Կ

## Խ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԱՐՏԱՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի 1.1 մասով, <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի $12^{2}$-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար Է. Փիրումյանի (2014թվականի հուլիսի 10-ի մտից N 7-1637) զեկուցագիրը, Խ. Խաչատրյանի համաձայնությունը

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ՝

1.Խաչատուր Խաչատրյանին 2014թվականի հուլիսի 10-ից, արտամրցութային կարգով, նշանակել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետի /ծածկագիր 16-2.1-23/ պաշտոնում:

2.Աշխատավարձը՝ համաձայն հաստիքացուցակի:

3.Խաչատուր Խաչատրյանին շնորհել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան:

4.Լ. Գևորգյանին և Խ. Խաչատրյանին՝ սահմանված կարգով կատարել հանձնման-ընդունման աշխատանքները:

5.Սույն հրամանի կատարման վերահսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար Է. Փիրումյանի վրա:

ՆԱԽԱՐԱՐ                    Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

<< 10 >> հուլիսի 2014թ.
ք. Երևան